ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Շատջրեք համայնքի ղեկավար Զ. Գևորգյանի 2011թ-ի կատարած աշխատանքների մասին

Հարգելի համագյուղացիներ հրավիրված անձինք Ձեզ եմ ներկայացնում համայնքում 2011թ-ի կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

Այդ առումով տեղեկացնում եմ Ձեզ, որ ինչպես իմ, այնպես էլ գյուղապետարանի աշխատակազմի գործունեությունը նպատակաուղղված է համայնքի բյուջեյի եկամուտների կատարմանը և համայնքում առկա հիմնախնդիրների լուծմանը: Համայնքի սոցիալ – տնտեսական վիճակը բարելավելու համար սեփական միջոցներով համայնքում իրականացվել է մի շարք աշխատանքներ: Այդ թվում գյուղամիջյան ճանապարհների փոսալցման և բարեկարգման, մասամբ վերանորոգվել է խմելու ջրագծերի արտաքին ցանցերը, բարեկարգվել, մաքրվել և ցանկապատվել է համայնքի թիվ 1 և 2 խմելու ջրաղբյուրների տարածքները: Նորոգվել է ոռոգման ցանցը: Իրականացվել է նաև համայնքի տարածքի աղբահեռացման, կանաչապատման և ծառատնկման աշխատանքներ:

ՀՀ կրթության գիտության և նախարարության ծրագրերի իրականացման գործակալության և համայնքի կողմից կատարած ներդրումների միջոցով համայնքի միջնակար դպրոցում տեղակայվել է նախակրթական դասարան: Համայնքի հիմնախնդիրներից՝ համայնքային կենտրոնի կառուցումն է: Համայնքն ունի ակումբ, գրադարան, սակայն շենքի վթարային լինելու պատճառով այն չի գործում, ամբողջովին փլվել է շենքի տանիքը:

Ֆինանսական միջոցների սուղ լինելու պատճառով համայնքի ավագանու հետ քննարկվել և նախատեսվել է 2012թ. ընթացքում միջոցներ փնտրել, կուտակել որոշակի գումար և գտնել համապատասխան դոնոր կազմակերպություն, որը կօգնի կառուցել համայնքային կենտրոն, որտեղ կտեղակայվեն ինչպես ակումբ գրադարանը, այնպես էլ գյուղապետարանը:

2011թ. համայնքի բյուջեի պլանային ցուցանիշի տարեկան 10431.3հազ. դրամի դիմաց կատարվել է 10640.6հազ դրամով, որը կազմում է 96.5%: Սեփական եկամուտների տոկոսը կազմում է 98.5%, կամ պլանային 4114.3հազ դրամի դիմաց կատարվել է 4050.7դրամով: Գույքահարկ հոդվածի ուղղությամբ կատարվել է պլանային 185.9հազ դրամի դիմաց կատարվել է 169.9հազ դրամով, կամ այն կազմում է 89.49%: Հոգի հարկ հոդվածի ուղղությամբ 1051.6հազ դրամի դիմաց կատարվել է 1054.3հազ դրամ: Հողի վարձավճար հոդվածի ուղղությամբ պլանային 2852.8հազ դրամի դիմաց կատարվել է 2806.4հազ դրամ այն կազմում է 98.37%:

ՀՀ կառավարությունը իր պարտավորվածությունը համայնքի նկատմամբ կատարել է 100%-ով: 2011թ. տարեկան կտրվածքով գյուղապետարանի աշխատողների աշխատավարձը և սոց ապահովագրության վճարները կատարվել են 100%-ով: Համայնքի աշխատակազմի աշխատակիցների նախորդ տարիներին կուտակված աշխատավարձի ապառքը մարվել է 2452.7 հազ դրամով, մնում է վճարելու 1382.0հազ դրամ, որը նախատեսվել է վճարել 2012թ.-ի ընթացքում: Սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվել է դրամական օգնություն 200.0 հազ դրամի չափով: Հավատացնում եմ Ձեզ, որ 2012թ. առավել հետևողականություն կդրսևորի ինչպես բյուջեի սեփական եկամուտների հավաքագրմանը, այնպես էլ համայնքի սեցիալ-տնտեսական զզարգացման քառամյա ծրագրով նախատեսված հիմնախնդիրների իրականցմանը:

Համայնքի ղեկավար՝ Զ. Գևորգյան